

**VII. ՀՀ ԱՎԾ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐՈՒՄ
2015թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ ՓԱՍՏԱԹՂԹԱՇՐՁԱՆԱՌՈՒԹՅԱՆ,
ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ՎԵՐՑՎԱԾ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԻ
ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՑՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումներում 2015թ.-ի ընթացքում փաստաթղթաշրջանառությունը հետևյալ թվային պատկերն է ներկայացնում.

1. Մտից թղթակցություն.

- ա/ ՀՀ կառավարության և ՀՀ վարչապետի որոշումներ (45 միավոր),
- բ/ գրություններ նախարարություններից և այլ գերատեսչություններից (2 166 միավոր),
- գ/ ՀՀ ԱՎԾ առանձնացված ստորաբաժանումներից (1 158 միավոր),
- դ/ ՀՀ ԱՎԾ կառուցվածքային ստորաբաժանումներից (572 միավոր),
- ե/ արտասահմանյան երկրներից (1 345 միավոր), այդ թվում՝ ԱՊՀ երկրներից (100 միավոր):

Ընդամենը՝ 5 286 միավոր (2014թ.-ի 4 736 միավորի դիմաց):

2. Ելից թղթակցություն.

- ա/ Ելից գրություններ (2 180 միավոր),
- բ/ հրապարակումներ (5 436 միավոր)

Ընդամենը՝ 7 616 միավոր (2014թ.-ի 11 470 միավորի դիմաց):

Ընդհանուր փաստաթղթաշրջանառությունը 2015թ.-ի ընթացքում կազմել է 12 902 միավոր (2014թ.՝ 16 206 միավորի դիմաց):

Ստացված թղթակցությունը 2015թ.-ին 2014թ.-ի համեմատությամբ ավելացել է 550 միավորով, իսկ ելից թղթակցությունը նվազել է 3 854 միավորով:

ՀՀ ԱՎԾ նախագահի կողմից 2015թ.-ի ընթացքում վերահսկողություն է սահմանվել 285 (2014թ.՝ 196 միավոր) փաստաթղթի (օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված ժամկետ պարունակող փաստաթղթեր) կատարումն ապահովելու համար, որոնք կատարվել են սահմանված ժամկետներում: